ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ,

Այսօր ուսանողության միջազգային օրն է: Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները: Յուրաքանչյուր պետության, քաղաքի զարգացումն անհնար է առանց ձեր մասնակցության: Մարտունին ունի զարգանալու եւ օրինակելի համայնք դառնալու բոլոր նախադրյալները եւ դա մեզ տալիս է լավատես լինելու բոլոր հիմքերը: Ժամանակին համընթաց քայլելու եւ հնարավոր զարգացումների կրողը դուք եք լինելու մշտապես: Համոզված եղե՛ք, որ առանց ձեզ եւ ձեր գիտելիքների այսօր դժվար է պատկերացնել մեր երկրի ու հատկապես Մարտունու զարգացման տեսլականը: Ուսանողության տարիները, թերեւս, երիտասարդության լավագույն տարիները լինելուց բացի, կառուցողական եւ բանիմաց, պետության անհրաժեշտ մասնագետ դառնալու տարիները պետք է լինեն ձեզ համար:

Եւս մեկ անգամ շնորհավորելով Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ, պետք է մաղթեմ ուսման մեջ հաստատուն կամք, աշխատասիրություն եւ նպատակասլացություն եւ օգտվելով պատեհ առիթից՝ հորդորում եմ լինել ակտիվ, հանդես գալ նախաձեռնություններով, ծրագրերով՝ համոզված լինելով, որ Մարտունու քաղաքապետարանը բաց է ձեր յուրաքանչյուր գաղափարի առջև:

Հարգանքներով՝

Մարտունի համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան